ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Սևակ Բազեյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2025 թվականի ապրիլի 22-ից մինչև ապրիլի 25-ը.

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Ոչ պաշտոնական. քաղաքականության նպատակներ, տարբերակներ և սահմանափակումներ» թեմայով դասընթացին մասնակցելը և մասնագիտական գիտելիքների զարգացումը.

5. Քննարկված թեմաները (հարցերը).

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

- Ընդհանուր տեղեկություններ ստվերային տնտեսության մասին,
- Աշխատավարձերի հարկում,
- Հարկային քաղաքականություն. Ստվերային տնտեսության հետևանքները և սահմանափակումները,
- Հարկային քաղաքականության և վարչարարության կապը ստվերային տնտեսության հետ,
- Ստվերային տնտեսության գնահատման մեթոդաբանությունները,
- Կենսաթոշակային, առողջապահական քաղաքականությունները և ստվերային տնտեսությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկման հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով հարկային քաղաքականության հնարավոր ազդեցությունը ստվերային տնտեսության վրա՝ դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները օգտակար կլինեն նախատեսվող աշխատանքների արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ստորագրությունը, ամսաթիվը *02 մայիսի 2025թ.*